

Այսօր տնտեսության հաջող զարգացման կարեւորագույն պայման է մրցունակ ապրանքների արտադրությունը: Այն-հայտ է, որ մրցունակությունը որոշող հիմնական եւ ամենա-կարեւոր ցուցանիշը որակն է:

Տնտեսության գլոբալացման գործընթացը սրում է մրցակցու-թյունը, քանի որ շուկայի ընդլայնումը գնորդին թույլ է տալիս ընտ-րել աշխարհի գրեթե բոլոր երկրների արտադրանքները: Արդյուն-քում՝ երկրներից յուրաքանչյուրը մրցակցում է մնացածների հետ որոշակի բնագավառում: Այսպիսի պայմաններում հաղթում է նա, ով արտադրանքի համար ապահովում է բարձր որակ եւ ցածր գին:

Ըստ մի շարք մասնագետների՝ որակը 85-98%-ով կախված է կառավարման որակից՝:

Կառավարման որակը բարելավելու ուղղություններից մեկը մի-ջազգային չափանիշներին համապատասխան որակի կառավար-ման համակարգերի (ՈԿՅ) ներդրումն է:

Կազմակերպությունում ՈԿՅ առկայությունը նշանակում է, որ տվյալ կազմակերպությունը կարող է բավարարել սպառողների պահանջումները, ինչպես նաեւ պետության կողմից սահման-վող պահանջները, այսինքն՝ ՈԿՅ-ն կազմակերպության մրցունա-կության հիմքն է:

Այսօր մի շարք մասնագետներ քննարկում են ՈԿՅ կիրառման արդյունավետությունը ՀՀ կազմակերպություններում: Հարց է առաջանում, թե արդյոք անհրաժեշտ է կատարել նման մեծ ծախ-սեր ՈԿՅ ներդրելու համար, արդյոք ինչ արդյունք կտա դրանց օգ-տագործումը կազմակերպություններում:

Վերլուծենք ՈԿՅ ներդրման արդյունավետությունը «Զերմուկ մայր գործարան» ՓԲԸ օրինակով, քանի որ այս ընկերությունն առաջինն էր հանքային ջրերի շուկայում, որ ներդրեց որակի կա-ռավարման ISO 9001-2000 համակարգը, եւ միակն է, որ յոթ տարի շարունակում է օգտագործել այն:

ԻՍՕ 9000:2000 ստանդարտում արդյունավետություն տերմինը սահմանվում է որպես ստացված արդյունքի եւ ռեսուրսային ծախ-սերի տարբերությունը:

Մեր կարծիքով՝ ՈԿՅ արդյունավետությունը կարելի է որոշել որպես տնտեսական արդյունավետություն, այսինքն՝ պետք է դիտարկել ՈԿՅ ներդրման եւ ընկերության տնտեսական ցուցա-նիշների կապը: Դիտարկենք, թե ինչպես են փոփոխվել «Զեր-մուկ մայր գործարան» ՓԲԸ տնտեսական ցուցանիշները ՈԿՅ ներդրելուց հետո:

ՈԿՅ արդյունավետությունը վերլուծելիս տնտեսական կարեւոր ցուցանիշ է արտադրության ծավալը (տես՝ աղյուսակ 1):

Դիտարկենք արտադրության ծավալի աճը եւ անկումը գրաֆի-կի տեսքով (տես՝ գծապատկերը):

Գծապատկերից երևում է, որ ՈԿՅ ներդրումից հետո նկատվել է արտադրության ծավալի թե՛ աճ, թե՛ անկում:

Արտադրության ծավալի աճի տեմպի անկում է գրանցվել միայն 2004թ. եւ 2007թ. մնացած բոլոր տարիներին նկատվել է ծավալի աճի տեմպ, հատկապես 2008թ. եւ 2002թ. միջեւ տարեկան աճի տեմպի ինդեքսը կազմել է 1.02%: Հենց այս վերջին ցուցանիշն էլ

կարող է բնութագրել ՈԿՅ ներդրման տնտեսական արդյունավե-տությունը:

Այսպես, ՈԿՅ ներդրելուց հետո հենց առաջին տարվա ընթաց-քում նախորդ տարվա համեմատ նկատվել է արտադրության ծա-վալի 1.1 անգամ աճ: Այնուհետեւ 2004թ. եւ 2005թ. ընթացքում ար-տադրության ծավալը կազմել է 2002թ. արտադրության ծավալի՝ համապատասխանաբար 89.05% եւ 96.03% : ՈԿՅ ներդրելուց հե-տո արտադրության ծավալի ամենամեծ աճը նկատվել է 2006-ին՝ 2002թ. նկատմամբ աճը 1.12 անգամ: Արտադրության ծավալի նվազման միտում է նկատվել նաեւ հաջորդ տարվա ընթացքում, սակայն 2008-ին 2002-ի համեմատ արտադրության ծավալը կրկին աճել է, այս անգամ 1.01 անգամ : Հանքային ջրերի արտադրու-թյան ծավալների գերակշիռ մասը ձեռք է բերվել աշխատանքի արտադրողականության բարձրացմամբ՝ ի հաշիվ աշխատողների միջին ցուցակային թվի կրճատման (տես՝ աղյուսակ 2):

Ավնհայտ է, որ ՈԿՅ ներդրումից հետո աշխատողների միջին ցուցակային թիվը կրճատվել է: Այսպես, 2003թ. համեմատ 2008թ. աշխատողների միջին ցուցակային թիվը կրճատվել է 49-ով, այ-սինքն՝ 1.36 անգամ, իսկ արտադրության ծավալը՝ ավելացել է 264566 շշով, այսինքն՝ 1.01 անգամ, հետևաբար՝ աշխատանքի արտադրողականության բարձրացման միտում է նկատվել:

Այժմ դիտարկենք աճի տեմպի եւ ՈԿՅ ներդրումից հետո կա-տարված ծախսերի կապը (տես՝ աղյուսակ 3):

Պատկերն ամբողջովին նույնն է այս ցուցանիշների գծով՝ ՈԿՅ ներդրումից հետո նկատվում է ծախսերի թե՛ ավելացում, թե՛ կր-ճատում: Այն տարեթվերին (2004 եւ 2007), երբ նկատվել է արտադ-րության ծավալի անկում, կրճատվել են նաեւ ծախսերը, հետեւա-բար՝ նաեւ փոփոխվել է շրջանառու ֆոնդերի արդյունավետությու-նը՝ պայմանավորված նյութատարության եւ նյութահատույցի ցու-ցանիշների փոփոխությամբ:

Դիտարկենք, թե ինչ ազդեցություն է ունեցել ՈԿՅ ներդրումը ար-տադրանքի ինքնարժեքի վրա: Այստեղ պատկերը մի փոքր այլ է, քանի որ 2006-ին գրանցվել է արտադրության ծավալի առավելա-գույն աճը, իսկ արտադրանքի ինքնարժեքը նույն ժամանակա-հատվածի համար ավելացել է 1.07 անգամ: Այսպես, 2008թ. 2003-ի համեմատ ինքնարժեքը ավելացել է 1.13 անգամ, փաստորեն՝ ՈԿՅ ներդրելուց հետո, բացի 2004թ. եւ 2005թ., նկատվել է ինքնար-ժեքի ավելացում:

Արտադրանքի ինքնարժեքի վերլուծությունը հատուկ կարեւ-րություն է ստանում այն արտադրություններում, որտեղ տնտեսա-կան արդյունավետության մակարդակը մեծապես պայմանավոր-ված է հենց այդ ցուցանիշով: Արտադրանքի ինքնարժեքի մեջ ար-տացվում են աշխատանքի արտադրողականության, արտադ-րական հիմնական ֆոնդերի եւ շրջանառու միջոցների օգտագործ-ման արդյունավետությունը, արտադրության տեխնիկական մա-կարդակը, ֆոնդազինվածությունը, աշխատանքի եւ արտադրու-թյան կազմակերպման ձեւերը: Արտադրանքի ինքնարժեքի վեր-լուծությունն ուղղված է արտադրանքի արտադրության, մատա-կարարման եւ իրացման ընթացքում նյութական, աշխատանքա-

ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՔԱՅԻՆ ԶՐԵՐ ԱՐՏԱԴՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ատենախոսության թեմա՝
Արտադրանքի որակի կառավարման տնտեսական հիմնախնդիրները (ՀՀ հանքային ջրեր արտադրող կազմակերպությունների օրինակով)
Գիտական ղեկավար՝
Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Նորայր ԲԱՂԱՍՅԱՆ
ՀՀ ԳԱՍ տնտեսագիտության ինստիտուտի սասփրանտ



«Ձերմուկ մայր գործարան» ՓԲԸ արտադրության ծավալները 2002-2008թթ.³ Աղյուսակ 1.


| Տարեթիվ | Ընդամենը ապակյա շշեր | Ընդամենը պոլիէթիլենային շշեր | Ընդամենը արտադրության ծավալ ⁴ |
|---------|----------------------|------------------------------|--|
| 2002 | 10.433.770 | 3.347.376 | 13.781.146 |
| 2003 | 9.964.280 | 5.120.898 | 15.085.178 |
| 2004 | 8.754.090 | 3.518.994 | 12.273.084 |
| 2005 | 8.813.970 | 4.420.830 | 13.234.800 |
| 2006 | 10.299.910 | 5.216.936 | 15.516.846 |
| 2007 | 9.169.588 | 4.530.406 | 13.699.994 |
| 2008 | 9.301.000 | 4.744.702 | 14.045.702 |

«Ձերմուկ մայր գործարան» ՓԲԸ աշխատողների միջին ցուցակային թիվը 2003-2008թթ. Աղյուսակ 2.

| Տարեթիվ | Աշխատողների միջին ցուցակային թիվ |
|---------|----------------------------------|
| 2003 | 183 |
| 2004 | 167 |
| 2005 | 140 |
| 2006 | 140 |
| 2007 | 139 |
| 2008 | 134 |

«Ձերմուկ մայր գործարան» ՓԲԸ արտադրական ծախսերը 2003-2008թթ. (հազ. դրամ) Աղյուսակ 3.

| Ցուկետներ | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 | 2008 |
|---|--------|--------|--------|--------|--------|--------|
| Հումք և կուլթեր | 213293 | 168089 | 169755 | 196778 | 181177 | 216090 |
| Գնով կիսապարտասուկներ, համալրող շինվածքներ և դետալներ | 151984 | 102789 | 106489 | 142576 | 120845 | 113820 |
| Վառելիք | 36605 | 31287 | 51219 | 41910 | 38765 | 45871 |
| Էներգիա | 14613 | 10390 | 12510 | 21504 | 21775 | 24374 |
| Աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումներ (ներառյալ՝ խթանող և փոխհատուցող վճարներ) | 107150 | 106058 | 106759 | 113616 | 111805 | 123850 |
| Հարկեր, բացի ինքնարժեքի մեջ մտնող հարկերից | 110404 | 75858 | 99955 | - | - | - |
| այդ թվում՝ ավելացված արժեքի հարկ | 89357 | 61818 | 69903 | - | - | - |
| Հաճախարար | 10492 | 7869 | 18791 | - | - | - |
| Եկամտահարկ | 9883 | 6171 | 9989 | - | - | - |
| այլ ծախսեր | 29997 | 37224 | 39131 | 77393 | 92358 | 102998 |
| Ըրիվ ինքնարժեք | 553642 | 455837 | 485863 | 593777 | 566705 | 627003 |



յին և ֆինանսական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման հնարավորությունների բացահայտմանը: Փաստորեն՝ արտադրանքի ինքնարժեքը հնարավոր է դարձնում արտադրության ծախսերի նկատմամբ հետագա վերահսկողության սահմանումը:

Ծախսերը, հետևաբար՝ նաև ինքնարժեքը ուսումնասիրելիս առաջնային դեր է ստանում տեխնոլոգիական սարքավորումների վերլուծությունը, քանի որ դրանից է մեծապես կախված շշերի շարժը և հանքային ջրի կորուստները:

Ինքնարժեքի վրա ազդող կարևոր գործոն է աշխատողների տրվող աշխատավարձի չափը: Այսպես, 2008թ. աշխատավարձը լրիվ ինքնարժեքի 19.75%-ն է կազմել: Առանձին գործարաններում աշխատավարձի ծախսումները տարբեր են՝ կապված ձեռքի և մե-

քենայական աշխատանքների հարաբերակցությունից: Ակնհայտ է, որ ձեռքի աշխատանքի գերակայության պայմաններում բարձր են աշխատավարձի տեսքով վճարվող վճարները, հետևաբար, մեր կարծիքով, գործարաններին անհրաժեշտ է տեղադրել պլաստիկ հոսքագծեր՝ այս գծով ծախսումները կրճատելու համար:

Վերլուծությունից պարզ է դառնում, որ «Ձերմուկ մայր գործարան» ՓԲԸ-ում ՈԿՅ ներդրելուց հետո 7 տարվա ընթացքում արտադրության ծավալի աճը, ինչպես նաև արտադրական ծախսերի կրճատումը կայուն, համաչափ միտումներ չունեն և մշտական բնույթ չեն կրում: Ուստի՝ կարծում ենք, որ ընկերությունը պետք է ուշադրություն դարձնի արտադրական կարողությունների օգտագործման բարելավման վրա, և քանի որ հանքային ջրերի առաջարկը որոշվում է ներքին ու արտաքին պահանջարկով, անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել սպառման նոր շուկաների հայտնաբերմանը, ինչն էլ իր հերթին կբերի իրացման և արտադրական ծախսերի կրճատման:

1. Стандарты и качество, К. Разумов-Раздолов, От качества продукции к качеству управления, март 2009.
 2. ISO 9000-2000, Որակի կառավարման համակարգեր. Հիմնական դրույթներ և բառարան
 3. Աղբյուրը՝ «Ձերմուկ մայր գործարան» ՓԲԸ-ի տրամադրած տվյալներ
 4. Շշերի քանակի մեջ ներառված են թե՛ ապակյա, թե՛ պոլիէթիլենային շշերը: